

# Նոյեմբերը Հայ ժողովրդի պատմության մեջ

## 1 Նոյեմբեր

**1871** Ծնվեց հայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ Ալեքսանդր Սպենդիարյանը: (Վախճ. 1928թ.-ին):

**1899** Մահացավ ազգային ազատագ րական շարժումների նշանավոր գ ործիչ Սերոբ Աղբյուրը (Սերոբ Վարդանյան):

**1901** Արևմտյան Հայաստանում Անդրանիկի ջոկատի և թուրքական կամոնավոր զորամասերի միջև տեղի ունեցավ Առաքելոց վաճքի կոչվոր:

**1928** Լենինականում բացվում է Հայաստանի պետական երկրորդ դրամատիկական թատրոնը:

## 2 Նոյեմբեր

**1829** Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: (Վախճ. 1866թ.-ին)

## 3 Նոյեմբեր

**1920** Թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլը:

**1932** Տեղի է ունենում Երևանի երկրորդ հիդրօկայանի հանդիսավոր բացումը:

**1934** Բացվում է Լենինականի մանկավարժական ինստիտուտը:

**1958** Գործարկվեց Արաբեկյանի հիդրոէլեկտրակայանը:

**1967** Երևանում գ որժարկվեց էլեկտրոնային օդական արագ ացուցիչը:

## 4 Նոյեմբեր

**1877** Ուսական զորքը գ եներալ Յովհաննես Լազարկի հրամանատարությամբ գ րավում է Կարսը:

**1879** Ալեքսանդրապոլում ծնվեց հայ նշանավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: (Վախճ. 1950 թ.-ին):

## 5 Նոյեմբեր

**1711** Մահացավ 17-րդ դարի Հայ Դատի ռահվիրա Խաչյել Օրին:

**1857** Ծնվեց ականավոր բանասեր, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը: (Վախճ. 1947թ.-ին):

**1922** Երևանում բացվում է պետական հանրային գրադարանը (1925 թվականից Ալ. Մյասնիկյանի անվան):

**1922** Երևանում բացվում է պետական թանգարան՝ հնագիտական, ազգագրական, պատմական, գեղարվեստական, հեղափոխական և արխիվային բաժիններով:

**1924** Հարք է նմտում Ղափանի պղնձաձուլարանը:

**1932** Տեղի է ունենում Մինչևան-Ղափան երկարուղու բացումը:

## 6 Նոյեմբեր

**1830** Նոր Նախիջևան քաղաքում ծնվեց Պաֆայել Պատկանյանը: (Վախճ. 1892 թ.-ին):

**1928** Երևանում տեղի է ունենում Անդրկովկասի անամբարուժական ինստիտուտի հանդիսավոր բացումը:

**2000** Ֆրանսիայի Ազգային ժողովը ճանաչեց հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրության կողմից: Ֆրանսիայի սենատը ընդունեց 1915թ. հայկական ցեղասպանության բանաձևը:

**2001** Մահացավ լրսանկարիչ Մալաք Կարշը: Նա լրսանկարիչ Յուլյան Կարշի եղբայրն էր: Մալաք Կարշը ճանաչված էր Կանադական մեկ դուարի վրա Կանադայի խորհրդարանի իր կատարած լրսանկարի համար: (Ծնվ. 1915թ.):

## 7 Նոյեմբեր

**1901** Վենետիկում վախճանվեց հայագետ, Մսիհաբար Միհրանության անդամ Ղևոնդ Ալիշանը: (Ծնվ. 1820թ.-ին):

**1999** Եվրախորհրդի նախարարների հանձնաժողովն ընդունեց Հայաստանը որպես Եվրախորհրդի լիիրավ անդամ:

## 10 Նոյեմբեր

**1912** Կաթողիկոս Գևորգ V-ը ստեղծեց «Ազգային պատվիրակություն» Պողոս Նուբար փաշայի գ լիավորությամբ Հայկական հարցը ոռւս և Եվրոպական դիվանագ իտության առջև բարձրացնելու համար:

**1914** Թուրքական գորքերի պարտությունը երգումի տակ:

**1914** Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լոյդ Ջորջը ներկայացրեց թուրքերին այսպես. «... մարդկային քաղցկեղ, սողացող տագ նաա վատ կառավարված հողերի համար, ովքեր կործանում են կյանքի յուրաքանչյուր թելք ... ովքեր ... պետք է պատասխան տան մարդկության հանդեպ կատարած անթիվ ստորությունների համար»:

## 11 Նոյեմբեր

**1118** Ծնվել է Վերածննդի դարաշրջանի հայ դասական, բժիշկ Մխիթար Չերացին:

**1949** Գործարկվեց Սևանի ստորերկոյա հիդրոէլեկտրակայանը:

**1983** Վախճանվեց հայ նշանավոր կոմպոզիտոր, դաշնականացար Արմեն Բաբաջանյանը: (Ծնվ. 1921թ.-ին):

## 12 Նոյեմբեր

**1765** Ծնվեց ռուսական բանակի գեներալ, իշխան Պետրոս Բագրատյանը: (Վախճ. 1812 թ.-ին):

**1878** Ծնվեց ականավոր բուշկիկ, արոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կոնունյանցը: (Վախճ. 1911թ.-ին):

## 13 Նոյեմբեր

**1855** Ուսական գորքերը գ րավում են Ղարսը:

## 14 Նոյեմբեր

**1932** Երևանում վախճանվեց ականավոր պատմաբան Լենն (Առաքել Բաբաջանյանի): (Ծնվ. 1860թ.-ին, Շուշիում):

## 15 Նոյեմբեր

**1855** Ուսական գորքերը գ րավում են Ղարսը:

## 16 Նոյեմբեր

**1937** Թիֆլիսում վախճանվեց գ րող Յակոբ Զակոր Շակոպանը: (Ծնվ. 1866թ.-ին, (Գանձակ) Ելիզավետպոլում):

**1957** Շահագ որման է հանձնվում Երևան-Ախտա (այժմ Քաղաքաց) երկաթուղար իժը:

## 17 Նոյեմբեր

**1823** Կ. Պոլսում վախճանվեց պատմաբան Միքայել Չամչյանը: (Ծնվ. 1738թ.-ին):

**1908** Ծնվեց Վիկոնտ Յամբարձումյանը (1908-1996), աստղաֆիզիկոս, ԽՄՀ գ իտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՅիշՍ գ իտությունների ակադեմիայի նախագահ:

**1931** Մահացավ Շերսպիրի թարգմանիչ Յովհաննես Խան Մատենյանը:

## 18 Նոյեմբեր

**1918** Կ. Պոլսում վախճանվեց հասարակական-քաղաքական գ ործիչ, բանասեր, պատմաբան, Պոլսի հայոց պատրիարք Մահմադ Օղոմանյանը: (Ծնվ. 1841թ.-ին):

## 19 Նոյեմբեր

**1918** Կ. Պոլսում վախճանվեց հասարակական-քաղաքական գ ործիչ, բանասեր, պատմաբան, Պոլսի հայոց պատրիարք Մահմադ Օղոմանյանը: (Ծնվ. 1841թ.-ին):

## 20 Նոյեմբեր

**1923** Երևանում բացվում է նախկին շարքային դաշնակցականների համագումարը:

**1944** Հիմնադրվում է արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունը (ԱՕԿՍ):

## 21 Նոյեմբեր

**1839** «Թանզիմաթի» իրատարակումը, որը թուրքիայի քիսասուլությանը շնորհում է խորհի ազատության սկզբունք և այլ քաղաքական իրավունքներ: (կրկնություն-ID 686)

**1945** ԽՄՀ ժողովուրիհրի որոշումը արտասահմանյան հայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին:

**22 Ծոյեմբեր**

**1965** Մահացավ երգ իծաբան Լեռ Կամսարը: (Ծնվ. 1889 թ.):

**1980** Սահմանվեց Մեսրոպ Մաշտոցի, Պետրոս Աղամյանի, Անանիա Շիրակացու, Խ. Արդվանի, Ա. Սարյանի և Կոմիտասի անվան մրցանակներ՝ մշակույթի և գ խորթյան սփյուռքահայ առաջադեմ գրքիներին շնորհելու մասին:

**1988** Յայկական ՍՍՀ Գերազ ույն խորհուրդը օրենք ընդունեց «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915թ.-ի ցեղասպանության դատավարության մասին»:

**1993** Դրամաշրջանառության մեջ մտավ ազգ այն նոր դրամային միավոր՝ «դրամ»-ը:

**23 Ծոյեմբեր**

**1735** Ծնվեց ազատագրական շարժման ռահվիրա Յովհաննես Լազարյանը:

**1918** Յայաստանի Յանրապետության բանակը գրավեց Ալեքսանդրապոլը:

**24 Ծոյեմբեր**

**1920** Ընկնում է դաշնակցական հին կառավարությունը և կազմվում է նոր կառավարություն Ս. Վրացյանի նախագ ահությամբ:

**1940** Դիմնադրվում է Երևանի կենդանաբանական այգ ին:

**1996** Որերես Քոչարյանը վերընտրվեց Արցախի նախագահ: Ընտրություններին ականատես էին միջազգ այն դիտորդները:

**25 Ծոյեմբեր**

**1895** Ալավերդու շրջանի Սանահին գյուղում ծնվեց Կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանը: (Վախճ. 1978 թ.):

**26 Ծոյեմբեր**

**1873** Ալսալշխայում ծնվեց հայ պատմաբան, բանասեր, աղբյուրագետ Յակոբ Մանանյանը: (Վախճ. 1952թ.-ին):

**1916** Ֆրանսիայի կառավարությունը որոշեց կոտորածներից ազատված հայ տարազ իրներից կազմել կամավարական Արևյան Լեգենը, որը կովելու էր Թուրքիայի դեմ և դաշնալու էր ապագա հայկական բանակի կորիզոն Կիլիկիայում: (Լուծարքի ենթարկվեց 1920 թ. սեպտեմբերի 27-ին):

**28 Ծոյեմբեր**

**1967** Երևանում տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի բացումը:

**1974** Շահագ ործման հանձնվեց Երևանի «Ռոսիա» կինոթատրոնը:

**29 Ծոյեմբեր**

**1920** Յայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն:

**1929** Բացվում է Երևանի պատանի հանդիսատեսի բատրունք:

**1933** Տեղի է ունենում Կիրովականի քիմիկական կոմիտեի և Դավալուի ցենենտի գ որժարանի բացումը:

**1937** Խորհրդային ոստիկանության կողմից սպանվեց հայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ և քննադատ Եղիշե Չարենցը: (Ծնվ. 1897թ.-ին):

**1939** Կաթողիկոս Գևորգ 6-րդ դիմեց ԽՍՀՄ-ին, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները Խորհրդային Յայաստանին միացնելու Թուրքիայի տարածքում գտնվող Արևմտյան Յայաստանի հոլերը:

**1943** Յայկական ԽՍՀ գ խորթյունների ակադեմիայի հանդիսավոր բացումը:

**30 Ծոյեմբեր**

**1920** Աղրեջանի խորհրդականացված կառավարությունը Արցախը ճանաչեց որպես Յայաստանի մի մաս, սակայն մի քանի օր անց փոխեց իր որոշումը:

# ԼՈՒՐԵՐ

## Իրանահայ համայնք

### Սրբոց Վարդանանց Եկեղեցու Նահատակաց Նվիրված Սրահի Օրինությունն Ու Բացումը

Բարձր հովանավորությամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Եպիսկոպոսի, Պատգամավորական ժողովի եւ Թեմական խորհրդի ներկայացուցիչների, ուրբաթ, հոկտեմբերի 4-ին, հաւատու ս. եւ անմահ պատարագի, տեղի ունեցավ Սարդարապատ (Ղեջմարիե) քաղաքանակի Ս. Վարդանանց Եկեղեցու վերանորոգված սրահի օրինությունն ու բացումը:



### Սրբազն Յոր Այցելությունները Թեհրանի Յայոց Ղպողոներ

Երկուարքի, նոյեմբերի 12-ի առաւտուեան Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Եպիսկոպոս հերթաբար այցելեց «Աթաբեկ» նախակրթարան, «Սատուն» մանկապարտեզ եւ «Նաիրի» տարրական դպրոց:

### Մեծարանքի Յանդիսություն Նվիրված Սպահանի Թատերասերներին

Սույն թվականի հոկտ. 21-ի երեկոյան Սպահանի «Ֆելսաթին» կինոթատրոնի դահլիճում տեղի ունեցավ մի հանդիսություն ներկայությամբ պետական մի շարք հիմնարկների տնօրենների, թատերասերների, դերասան-դերասանուհիների, ժողովրդի նվիրված Սպահանի թատերասերներին:



«Աթաբեկ» նախակրթարան

Յանդեսում եղան գնահատական խոսքեր եւ այլ արտահայտություններ, արտասանվեցին բանաստեղծությունների, իսկ վեջում մեծ թվով դերասան-դերասանուհիներ եւ թատրոնի գանազան ճյուղերում մասնակցողների նվիրեցին ոսկի, հուշանվեր եւ գնահատագրեր:

# Հոյս Կրիցարաբարերք

Ուրախալի է հայտնել, որ գնահատագիր ստացողներից էր նաև Եւեն Մինասյանը, որ երկրորդ անձն էր ստացողների:

Եւեն Մինասեանը թեւ թեն չի բարձրացել, բայց երկար տարիներ, հատկապես դպրոցական շրջանում, թեմադրել է բատրերկներ ու նաև գրել, որոնց ժողովածուն մանուլի տակ է ներկայիս:

ԱՍՍԻՄ  
Նոր Զույա

Ս. Մինասի Տոնի Առիթով Տեղի Ունեցած  
Մատաղորհներ Եւ Ս. Պատարագ



Երկուշաբթի, 2 դեկտ. Երեկոյան Ս. Մինաս եկեղեցուն տեղի ունեցավ հսկումի արարողություն եւ աղո օրինություն՝ թեմիս առաջնորդ Տ. Սեպուհ Եպիսկոպոսի Սարգսյանի հովանավորությամբ եւ նաև աղո օրինություն՝ թեմիս առաջնորդ Տ. Ս. Պողոս Պատարագ:

## Իրան

«Արարատ» Ֆիլմը Պարսկերեն Մամուլուն

«Մինենա» շաբաթաթերթը իր անցյալ շաբաթվա՝ չորեքշաբթի, նոյեմբերի 27-ի համարում «Աշխարհի կինո» բաժնում անդրադարձել է կանադահայ թեմադրիչ Աստու Էգոյանի «Արարատ» ֆիլմին: Ներկայացրել է ֆիլմում դերակատար անձանց եւ կարճ բացատրություններ տվել ֆիլմի թեմայի վերաբերյալ: Նաև մեջբերումներ է կատարել «Հայկուդ» ռիփորերորոշ կատարված վերլուծությունից: «Թոսեն» օրաթերթը եւս իր Երկուշաբթի, նոյեմբերի 25-ի համարում տպագրել է մի հոդված՝ «Արարատ»-ի վերաբերյալ, որը պատկանում է Հարա Պետրոսյանի գրչին:

**Մշակում է հայ-իրանական տնտեսական համագործակցության 5-ամյա ծրագիրը**

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քոլեյնի տվյալներով, 2002 թ. վերջին վեց ամիսներին հայկրանական սահմանը հատել է 14 հազար բեռնատար ավտոմեքենա, ինչն ավելին է, քան ամբողջ անցյալ տարվա ցուցանիշը: Երեւանից Թեհրան ու Թավրիզ եւ հակառակ ուղղությամբ շաբաթական կատարվում է 4-5 չվերթ, որոնցով այս տարվա ընթացքում փոխադրվել են Երկու երկրների 50 հազար քաղաքացիներ: Այս տվյալները «Հայաստանի արտաքին տնտեսական կայտին եւ տարածաշրջանային համագործակցության արդի խնդիրները» թեմայով սեմինարի ժամանակ ներկայացնելով, դեսպանը նշեց, որ վերջին երկու տարիներին Հայաստանի եւ Իրանի տնտեսական հարաբերությունները որակական փոփոխություններ են կրել, եւ երկու երկրների կառավարությունները ներկայում ավելի շատ են ուշադրություն դարձնում ենթակառուցվածքների ծեւավորմանը: Մշակման փոլում է հայկարանական

տնտեսական համագործակցության 5-ամյա ծրագիրը:

Դիվանագետի տեղեկատվությամբ, Արևտորի հանաշխարհային կազմակերպության Իրանի եւ Հայաստանի անդամակցությունից հետո հնարավոր է, որ մեղմացվեն ներկայում երկու երկրների միջև առեւտրում գործող սակագները:

Անդրադարձնալով «Նախրիտ-1»-ի սեփականաշնորհումից հետո ծագած խնդիրներին, նա ընդեց, որ դրանց լուծման ժամանակ պետք է հաշվի առնվեն հարակից, մասնավորապես, Իրանի քիմիայի ճյուղում առկա իդողությունները: Ներկայում այդ երկրում գործում է 13 թիմիական համալիր, որոնց թիվն առաջիկա տարիներին նախատեսվում է հասցեն 24-ի, եւ այդ պարագայում, Ս. Քոլեյնի հավաստմաբ, Իրանը կրառնա քիմիական արդյունաբերության համաշխարհային բեւեռներից մեկը:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության նախագահ Արտեն Ղազարյանը, արծարթելով «Նախրիտ-1»-ի խնդիրն, ընդգծեց, որ գործարանի սեփականատեր «Ռանսատ» ընկերությունը դժվարություններ ունի «Ռանսատ-Նախրիտ» վարկավորման գործում, քանի որ վարկատուները, նկատի ունենալով Հայաստանից տրանսպորտային հյուսիսային ելերի թանկությունը, իրական չեն համարում «Ռանսատ» ծրագրերը:

**Հայ-իրանական համանաժողովի հերթական նիստ Թեհրանում**

ԹԵՀՐԱՆ, 6 ԴԵԿԵMBERԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստան իրանական գագի փոխադրման նախագծին առնչվող հարցերն են հինգշաբթի օրը Թեհրանում բացված հայ-իրանական համատեղ տնտեսական հանձնաժողովի հերթական՝ չորրորդ նիստի օրակարգում: Բարձրաստիճան հայկական պատվիրակության կազմում ընդգրկված են ՀՀ տարրեր՝ նախարարությունների եւ գերատեսչությունների ներկայացուցիչներ: Քննարկելու են նաև այնպիսի բնագավառներում երկողմ համագործակցության հարցերը, ինչպես տրանսպորտը, կապը, բնակչությունը, առեւտուրը, էներգետիկան, գիտությունը եւ կրթությունը: Համատեղ հանձնաժողովի աշխատանքը կշարունակվի մինչև դեկտեմբերի 12-ը:

## Հայաստան

**Ասորի ուղղափառ եկեղեցու պետ Սար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքը այցելեց Սր. Էջմիածին**

ՅՈՒՆԵՄԲԵՐԻ 18-ի վաղ առավիտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հրավերով, Հայաստան ժամանեց Անտիոքի եւ համայն Արեւելքի Ասորի ուղղափառ քույր եկեղեցու գահակալ Սար Իգնատիոս Զաքքա Իվաս Ա պատրիարքը, տեղեկացնում է Սայր Աթոռի նամլո դիվանը: «Զվարթնոց» օդանավակայանում Ասորի եկեղեցու գահակալին եւ նրան ուղեկից մետրոպոլիտներին Անենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսի գլխավորությանը դիմավորեցին Տ. Ներսես արք. Պողապայանը, Տ. Ռուկան արք. Գալիքակյանը, Մայր Սր. Էջմիածին միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եղիշի Եպա. Պետրոսյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ Եպա. Կոյոյանը, ՀՀ կառավարության նախարար Եպա. Կոյոյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Նավասարդը:

# Հոյս Ռիկրաբարերք

ներկայացուցիչներ, Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ֆայեզ Արսին: Յնտմիջօրեկին բարիգալստյան արառողջություն տեղի ունեցավ Սայր Արոր Սր. Էջմիածնում: Սայր տաճարում երկու հայրապետները աղոթք բարձրացրին առ Աստված եւ ապա՝ փոխանակեցին ողջույնի խոսքեր: Քսան տարի անց սա պատրիարքի երկրորդ այցն է Հայաստան: Օգտվելով առիթից՝ պատրիարքը անձամբ իր շնորհավորանքը հայտնեց Հայոց հայրապետին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամա հոբեմանի, ինչպես նաև Վեհափառ հայրապետի ընտրության առիթով:

Նոյն օրը հայրապետները եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ այցելեցին Ծիծենակարերդ իրենց խոնարհումը բերելու Հայոց մեջ եղենմի զոհերի հիշատակին: Նրանք ծաղկեպսակներ դրեցին եղենմի զոհերի հուշարձանին: Կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

Յովկապետները այցելեցին նաև հուշարձանին կից գործող ցեղասպանության քանգարան:

## Սերգեյ Բալասանյանն արժանացել է «ՄԱԿ-Սասակավ» մրցանակին

Միացյալ ազգերի կազմակերպությունը վերջին 15 տարվա ընթացքում անցկացնում է անենամյա միջազգային մրցաշար՝ «ՄԱԿ-Սասակավա» մրցանակաբաշխությամբ: Մրցանակն ունի մեկ դափնեկիր եւ 5 սերտիֆիկատ: «ՄԱԿ-Սասակավա» մրցանակը համարվում է ՄԱԿի ամենաբարձր մրցանակը եւ շնորհվում է «Ալեքսեյի կանխարգելման նվաճումների համար» քաղաքական, գիտական, տեխնոլոգիական եւ կիրառական ոլորտներում:

2002 թ. Հայաստանից «ՄԱԿ-Սասակավա» մրցանակին է արժանացել Հայկական սեյսմոլոգիայի եւ երկրի ֆիզիկայի ասոցիացիայի նախագահ, տեխնիկական գիտությունների դոկտոր Սերգեյ Բալասանյանը:

Մրցանակը բոլորեղապակյա գավաթը եւ 50 հազար ԱՄՆ դոլար, երեկ հանձնվել է պահ Բալասանյանին, որի առթով «Լոյս»-ը նրան շնորհավորում է:

## ՀՈԱԿ Հանրապետական վարչության կազմը ընտրված XI պատգամավորական ժողովի կողմից

1. Ոուբեն Միրզախանյան ատենապետ
2. Հարություն Առաքելյան
3. Յրայա Կարապետյան
4. Յամլետ Կարապետյան
5. Ոորերոտ Մավիսակասյան
6. Անտոն Փիլյան
7. Գագիկ Վարդանյան
8. Միեր Մելիքսեմյան
9. Մեսրոպ Հարությունյան
10. Մեհսակ Գեւորգյան
11. Գառնիկ Յովակիմյան
12. Արմա Անդրեասյան
13. Վահագն Փիլիպոսյան
14. Լավենտի Բարսեղյան
15. Արմեն Ստեփանյան
16. Գայանե Մուրադյան
17. Կարեն Կակոյան
18. Արման Կարապետյան
19. Միհնաս Միհնասյան
20. Արմեն Ազիզյան
21. Կարեն Թունյան

22. Ոուբեն Քոչար
23. Նորիկ Գրիգորյան
24. Մեղուժան Պետոյան
25. Յուրա Սաֆարյան
26. Ֆեռիխնանդ Հարոյան
27. Հովիկ Հակոբյան
28. Սամվել Մինասյան
29. Արա Գյուլնազարյան

Փոխանդամներ

1. Նորայր Հարությունյան
2. Գեւորգ Ասատրյան
3. Արմեն Մարգարյան
4. Վաչագան Հովսեփյան

ՀՈԱԿ դատական ատյանի կազմը ընտրված XI Պատգամավորական ժողովի կողմից

1. Կառլեն Գեւորգյան
2. Զուլիետա Գուլասարյան
3. Արմեն Մանվելյան
4. Աշոտ Գալստյան
5. Տիգրան Այվազյան

ՀՈԱԿ Վերստուգի հանձնաժողովի կազմը ընտրված XI Պատգամավորական ժողովի կողմից

1. Յակոբ Գրիգորյան
2. Յակոբ Բաբայան
3. Վանո Գրիգորյան

## Ոուբեն Միրզախանյանի կենսագրական տվյալները

Ոուբեն Միրզախանյանը ծնվել է 1959 թ. Երեւանում: Ավարտել է Երեւանի թիվ 114 միջնակարգ դպրոցը եւ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Պատմական գիտությունների թեկնածու (1984 թ.), դոցենտ (1986 թ.):

1980 թ. աշխատել է թիվ 17 տեխնիկական ուսումնարանում որպես ուսումնաբարտադրական վարպետ եւ քաղաքատնտեսության դասախոս: 1981 թ.կից գիտամանկավարժական գործունեություն է վարում Խ. Արովյանի անվան հայկական աետական մանկավարժական համալսարանում: 1990 թ.կից կուլտուրայի ֆակուլտետի դեկանն է: Դասավանդում է «Քաղաքական պատմություն» եւ «Համաշխարհային մշակույթի պատմություն» առարկաները:

Ոուբեն Միրզախանյանը Հայաստանի Պամկավար Ազգատական կուսակցության հիմնադիրներից է: 1991 թ. սկզբում նա ընտրվել է ՀՈԱԿ հիմնադիր խորհրդի նախագահ, իսկ 1991 թ. դեկտեմբերին կուսակցության առաջին Պատգամավորական ժողովում ՀՈԱԿ Հանրապետական վարչության ատենապետ եւ անընդմեջ վարել այդ պաշտոնը մինչեւ 1996 թ. հուլիսը: 1996 թ. հոկտեմբերի մինչեւ ՀՈԱԿ 7կող Պատգամավորական ժողովը (1997 թ.) ՀՈԱԿ Հանրապետական վարչության դիվանի անդամ, ՀՈԱԿ 9կող Պատգամավորական ժողովում (1999 թ. ապրիլին) կրկին ընտրվեց ՀՈԱԿ Հանրապետական վարչության ատենապետ: Նոյն թվականին հանդիսանում էր ՀՀ նախագահին առընթեր քաղաքական խորհրդի անդամ: 2001 թ. դեկտեմբերին կուսակցության X Պատգամավորական ժողովում ընտրվեց ՀՈԱԿ ատենապետ: Հայաստանի Ռամկավար Ազգատական կուսակցության ԽI պատգամավորական ժողովը (2002 թ. հոկտեմբերի 16) վերընտրում է ՀՈԱԿ ատենապետ:

Ո. Միրզախանյանը Հայաստանի թագավորական անդամ է, «Ազգ» օրաթերթի և «Պայքար» ամսագրի հիմնադիր եւ խմբագրական խորհրդի անդամ, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի խորհրդի անդամ:

Ո. Միրզախանյանը մի շաբթ գիտական եւ հրապարակախոսական հոդվածների հեղինակ է, բազմից մասնակցել է միջազգային քաղաքական եւ գիտական խորհրդաժողովների:

## Արցախ

«Յայ ժողովրդի ճակատագիրը որոշվում է Արցախում»  
Հեռուստամարաթոն 2002-ն ավարտվեց,  
ստացվեց ավելի քան 5 մլն դրամի  
նվիրատվության խոստում

Լու Անջելեսում ավարտված «Յայաստան» համահայկական հիմնարդարմի ազգային տուրի հերթական հեռուստամարաթոնում ստացվեց 5.073.000 ԱՄՆ դրամի նվիրատվության խոստում: Ինչպես նախորդ հեռուստամարաթոններում, այս անգամ եւս եղան խոշոր նվիրատվություններ. տիկին Լուիզ Սիմոն Մանուկյան 1 մլն դրամ, Յիշայ Շովանյան՝ 1 մլն, Ալբերտ Բոյաջյան՝ 0,5 մլն: Ըստ երկրների՝ մասնակցությունը հետեւյալն է.

ԱՄՆ Արեւելյան ափ - 1.901.000 դրամ

ԱՄՆ Արեւելյան ափ - 1.713.000

Ֆրանսիա - 650.000

Յայաստան - 210.000

Արգենտինա - 75.000

ԼՂՀ - 53.000

Գերմանիա - 31.000

Հունարա�խանական պատմության մասնակցությունը ինչպես ցանկալի էր, քանի որ նախարար համաձայն մեր գործարարները գորեթ չէին մասնակցում, այսինքն դրամ չէին հանգանակում, ինչը սփյուռքում հիասթափություն էր առաջացնում. ինչո՞ւ հայաստանցի եւ արցախցի գործարարները չեն մասնակցում դրամահավաքին, երբ այդ գումարներն ուղղվում են ՀՀ-ի բարգավաճմանը:

Այս անգամ հայաստանցի եւ արցախցի գործարարները միասնաբար հանգանակեցին ավելի քան 260 հազար դրամ: Նշենք նաև նշանակած մասնակցությունը: Հրանտ Վարդանյան, Միքայել Բաղդասարյան, Գագիկ Ծառուկյան, Արմեն Ղազարյան, Յարություն Փամբուկյան, Սամվել Ավետիսյան... Հեռուստամարաթոնը տեսեց 12 ժամ, արքանյակային եւ համակարգչային կապով հեռարձակվեց ամբողջ աշխարհում: «Մենք ենել ենք միասին Արցախյան շարժման, դաժան պատերազմի տարիներին եւ հայրել ենք, որովհետեւ ենել ենք միասին Սփյուռք և Յայաստաններցախ: Այսօր Արցախն ունի ձեր աջակցության կարիքը: Արցախը կառուցում է պետություն, զարգացնում տնտեսությունը: Եթե մենք այսօր չկարողանանք մեր ռազմական հաղթանակներն ամրապնդել տնտեսական հաղթանակներով, մեր բոլոր ձեռքբերումները կյանան անհնաստ: Այսօր հայ ժողովրդի ճակատագիրը որոշվում է Արցախում: Եղել է ժամանակ, երբ հայ ժողովրդի ճակատագիրը որոշվում էր Սարդարապատում, այսօր ճակատն Արցախն է: Ինձ հաճախ հարց են տալիս, թե ինչպես է լուծվելու Լոյնային Ղարաբաղի հարցը: Ուզում եմ վստահեցնել:

որ ԼՂ հարցը լուծում եք դուք՝ ձեր տնտեսական եւ հումանիտար, ինտելեկտուալ եւ մշակութային աջակցությամբ», հեռուստամարաթոնից համայն հայությանը դիմեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը:

Հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված գումարն ուղղվելու է ԼՂՀի ողնաշարի՝ «Յոյսիսի-հարավ» 162 կմ երկարությամբ ավտոմայրուղու շինարարությանը, որի 40 կմներ կրկին համայն հայության ջանքերով, արդեն կառուցվել է:

«Յոյսիսի-հարավ» ավտոմայրուղին անցնում է ԼՂՀ բոլոր հինգ շրջաններով, մայրաքաղաք Ստեփանակերտի մոտ համգուցվում «Գոյսիսի-Ստեփանակերտ» ավտոմայրուղուն: ԼՂՀ-ի համար տնտեսական, քաղաքական ռազմավարական նշանակություն ունեցող այս ճանապարհը, որն իրավամբ համարվում է ողնաշար, անցնելու է Ղարաբաղի ավելի քան 20 բնակավայրերով եւ մոտենալու է 100-ից ավելի բնակավայրերի, որոնց առավելագույն հեռավորությունը մայրուղուց 10-20 կմ է:

### Արկադի Ղուկասյանը հաստատեց ԼՂՀ կառավարության կառուցվածքը եւ կազմը

Դոկտորների 9-ին Լեռնային Ղարաբաղի Յանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը հրամանագիր է ստորագրել ԼՂՀ կառավարության կառուցվածքը հաստատելու մասին:

Դրամանագիրի համաձայն, կառավարության կառուցվածքում ընդգրկվել են:

1. Առողջապահության նախարարություն
2. Արտադրական ենթակառուցվածքների զարգացման եւ քաղաքաշինության նախարարություն
3. Արտաքին գործերի նախարարություն
4. Գյուղատնտեսության նախարարություն

5. Կառավարության աշխատակազմի ղեկավարելունակարար

6. Կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

7. Ներքին գործերի նախարարություն

8. Պաշտպանության նախարարություն

9. Սոցիալական ապահովության նախարարություն

10. Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն

11. Ազգային անվտանգության պետական վարչություն

12. Արդարադատության պետական վարչություն

13. Հարկային պետական վարչություն

Դանրապետության գործադիր իշխանության արյունակետ կառուցվածքի ձեւագրման նպատակով եւ ղեկավարվելով «ԼՂՀ նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետով, նախագահի հրամանագրով լուժարվել են տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախարարի պաշտոնը. կրթության եւ գիտության նախարարությունը, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունը, քաղաքաշինության նախարարությունը:

Դրամանագրի համաձայն, ստեղծվել են արտադրական ենթակառուցվածքների զարգացման եւ քաղաքաշինության նախարարություն, կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն: Ֆինանսների նախարարությունը վերակազմակորվել է ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության:

Նախագահի հրամանագրով սահմանվել է, որ ԼՂՀ վարչապետն ունի երկու տեղակալ՝ արտադրական ենթակառուցվածքների զարգացման եւ քաղաքաշինության նախարարությունը կայության մեջ այլ հրամանագրով կառավարության անդամներ են նշանակվել:

1. Բենիկ Բախչիյանը՝ ԼՂՀ փոխվարչապետ, գյուղատնտեսության նախարար

2. Սուրեն Գրիգորյանց- ԼՂՅ կառավարության աշխատակազմի ղեկավարևանախարար
3. Արմեն Սարգսյանց- ԼՂՅ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարար
4. Արմեն Խագուլովը- ԼՂՅ ներքին գործերի նախարար
5. Մեյրան Օհանյանց- ԼՂՅ պաշտպանության նախարար
6. Սայարտակ Թեւոսյանց- ԼՂՅ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար
7. Բակո Սահակյանը ԼՂՅ ազգային անվտանգության պետական վարչության պետ
- 8-ԼՂՅ արտաքրն գործերի նախարար է նշանակվել Աշոտ Ղուլյանը

## Հայոց Սփյուռք

«Արարատի» շրջադաշտ հաղթանակն  
Օտտավայում

Հոկտեմբերի 29-ին Օտտավայի (Կանադա) Ազգային պատկերասրահում տեղի է ունեցել Առողջ Էգոյանի «Արարատ» ֆիլմի պրեմիերան, որին ներկա են Եղել ըստ ստացված տեղեկությունների, կանադական ազգային ժառանգության պահպանման նախարար Շեյլա Կոպսը, այլ նախարարներ, խորհրդարանի անդամներ եւ դիվանագիտական նարմնի ներկայացուցիչներ:

Մոնթեալից, Տորոնտոյից եւ Օտտավայից հայ համայնքների ներկայացուցիչների, օտարերկրյա հյուրերի, ինչպես նաև ռեժիսոր Եգոյանի, դերասաններ Արսինե Խանջյանի եւ Դեյվիդ Ալպայի առաջ ելույթ ունենալով, նախարար Կոպսը բարձր է գնահատել խորհրդարանական Սարգիս Ասատուրյանի եւ հայազգի ռեժիսորի ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում եւ Կանադայի կառավարությամբ կոչ է արել պաշտոնապես ճանաչել 1915-ի իրադարձությունները որպես ցեղասպանություն:

«Զափազանց ուրախ եմ, որ «Արարատը» նման շրջադաշտ հաջողության արժանացավ Օտտավայում։ Վստահ եմ, որ այս ֆիլմը բազմապատկերու է մեր ջանքերը ցեղասպանության ճանաչման գործում։ Այսու մենք շատ ավելի մոտ ենք այդ նպատակին, քան երբեմն։ Ընդհակալություն են հայտնում Առողջ եւ Արսինե Էգոյաններին», այդ առթիվ ասել է Սարգիս Ասատուրյանը։

Ավելացնենք, որ նոյեմբերի 17-ին «Արարատը» ցուցադրվելու է Լոնդոնի ֆիլմերի փառատոնում, նաև Օտտավայի կինոթատրոններում դեկ. 6-15.

Ցեղասպանության գոհերի հուշարձան  
Կաննում

Իր ավանդական կինոփառատոնով հօչակված միջերկրածովյան Կաննը Ֆրանսիայի վերջին քաղաքն է, որտեղ բացվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության գոհերի հուշարձան։ Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ սեպտեմբերի 14-ին Կաննը գլխավոր պողոտայի Կրուազետի մերձակա Վերջեն պուրակում տեղի է ունեցել զույգ կոթողներից կազմված հուշարձանի բացումը։ «1915 թ. Երիտրութերի կառավարության իրականացրած ցեղասպանության 1,5 մլն հայ գոհերի հիշատակին» մակագրությունից բացի առկա է «Ի փառ 1914-18 եւ 1939-45 թթ. Ֆրանսիայի համար գրիված հայ մարտիկների» տապանագիրը։ Հուշարձանի հեղինակն է Ալբերտ Միխթարյանը։

Բացման արարողությունը կազմակերպել էին Կոտ դ'Ազուրի համայնքային խորհուրդը եւ Կաննի հայոց միությունը։ Ներկա են Եղել ՀՀ և Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունին, Ֆրանսիայում ՀՀ դեսպան Եղվարդ Նալբանդյանը, Կաննի քաղաքապետ Բեռնար Բրոշանը, նրա առաջին տեղակալ Անդրե Ժիրուն, Ֆրանսիայի Հայ դատի հանձնախմբի նախագահ Ալեքսի Գովյանը, Մարդու իրավունքների լիգայի նախագահ Անրի Ռոսին, Ֆրանսիայի նախկին մարտիկների ընկերակցության անդամներ եւ այլ անձինք։

Կոտ դ'Ազուրի համայնքային խորհրդի նախագահ Գասպար Կայացանյանը, որը Կաննի մասնաճյուղի հետ ջանքեր էր գործադրել հուշարձանի բացման թույլտվություն ստանալու համար, իր ելույթում ընդգծել է, որ Մեծ Եղեռնի գոհերի հիշատակի պահպանությունն է։ Շրջանային խորհրդի փոխնախագահ Պատրիկ Ալմանը, դեսպան Եղվարդ Նալբանդյանը եւ քաղաքապետ Բեռնար Բրոշանն իրենց Ելույթուրում խոսել են 1915 թ. ցեղասպանության, ինչպես նաև հանուն ազգատության եւ Ֆրանսիայի հայ գինվորների ու դիմադրության շարժման մարտիկների տվյալ գոհերի մասին։

## Միջազգային

30 մլն դոլարի պայմանագրեր՝ Գլենդեյլից

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայկական ընկերությունները 2003թ. մատակարարման համար 30 մլն դոլարի պայմանագրեր են կնքել Վերջերս Գլենդեյլում կյացած «Էքսպոն2002» արտադրությունը։ Հայաստանում» ցուցահանդեսի արդյունքներով։ Ինչպես տեղեկացրեց Զարգացման հայկական գործակալության գործադիր տնօրեն Վահագն Մովսիսյանը, հայկական արտադրանքին նվիրված ավանդական ցուցահանդեսին մասնակցել են 77 ընկերություն եւ կազմակերպություն ներկայացնելով համրապետության տնտեսության 11 ոլորտ։

Վ. Մովսիսյանի խոսքերով, ցուցահանդեսի ժամանակ կյացած գործադրար համաժողովի ժամանակ ներկայացվել են Հայաստանի ներդրումային հնարապետությունները։ ԶԳԴ-ի շնորհանդեսի ժամանակ ներկայացվել է համրապետության մակրոտնտեսական դաշտը, իսկ Համաշխարհային բանկի, ԱՄՍԿի Միջազգային զարգացման գործակալության, Անդրեյկայի հայկական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ տնտեսական անփոփոքրեր։

Կանադայում մերժվեց Հայոց  
ցեղասպանության օրինագիծը

ՕՍՏԱՎԱ, 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅԵՄ ՏԱՊԱՍ: Կանադայի համայնքների պալատի արտաքին հարաբերությունների եւ միջազգային առեւտրի կոմիտեն 5:6 հարաբերակցությամբ մերժել է 1915 թի Հայոց Եղեռնի դատավարության բանաձեւը։ Բանաձեւը դեկտեմբերի 4-ին առաջ էր քաշել կոմիտեի անդամ Սվենդ Որթինսոնը (Ազգային ժողովրդավարական կուսակցություն), մինչդեռ, ինչպես տեղեկացնում է խորհրդարանի հայազգի պատգամավոր Սարգիս Ասատուրյանի գրասենյակը, քանաձեւի մերժումը նշանակում է, որ այն չի ներկայացվի բնարկման համայնքների պալատ։ Բանաձեւի տեքստը կազմվել է Սարգիս Ասատուրյանի կողմից նոյեմբերի 27-ին եւ մասնավորապես նոյեմբեր, 2003թ. էջ 6

սահմանում էր. «Կոմիտեն կոչ է անում համայնքների պալատին ճանաչել Հայոց ցեղասպանությունը, որ տեղի ունեցավ նախորդ դարասկզբին Օսմանյան թուրքերի կողմից 11հին աշխարհամարտի ընթացքում»:

«Յավալի է, որ կոմիտեն մերժեց քննարկումը հետաձգելու նախապես ներկայացված ին դիմումը», հայտարարել է Ասատուրյանը: Հայազգի պատգամավորը դիմել է կոմիտեի անդամներին քվեարկության արդյունքները չեղյալ հայտարարելու հայցով:

## NBC-ին թուրքերին որակել է «խառնակի»

ԱՆԿԱՐԱ, 12 ՆՈՅԵՄԲԵՐԸ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբերի 9-ին ամերիկյան NBC հեռուստաընկերության «Saturday Night Live» հաղորդման ընթացքում թուրքերի հասցեին հնչել են վիրավորական արտահայտություններ, որոնք առաջ են բերել ամերիկաբնակ թուրքերի հակազդեցությունը:

Հայորդման ընթացքում թուրքի դերու համեստ է եկել հույն դերասան Նիհա Վարդապոսը, որը թուրքերին բնութագրել է որպես «խառնակիչներ» եւ «հայերի դուշմաններ»: Ըստ թուրքական «Զանան» թերթի, թուրքերը հաղորդման ընթացքում համեստ են եկել որպես բարարոս, կոպիտ մարդիկ, որոնք օգտագործել են տարբեր լիտի արտահայտություններ, որոնց թվում «այս աղջիկը լավն է, հայ չե» եւ այլն: ԱՄՍԼՈՒ գործող «Թթվարիշ ֆորում» կազմակերպությունը բողոքարշավ է սկսել «Միլլիեր» օրաթերթի տեղեկատվությամբ, NBC-ին հղված ուղերձում նշվում է. «Թուրքերն արաբներ չեն եւ թուրքերը հայերին չեն ասում»: Թուրքական կողմը պահանջել է NBC-ից ներողություն խնդրել: «Թթվարիշ ֆորումի» ինտերնետային էջում «Երիտասարդ թուրքեր» ստորագրությամբ տպված հայտարարության մեջ նշվում է, որ հաղորդումը, Ալան Փարքերի «Կեսգիշերային ճեպճարաց» հայտնի հակառարքական ֆիլմի նախությամբ պատրաստվել է հայկական եւ հունական լոբբիների ֆինանսավորմանը:

**Կոնգրեսը պահանջում է ճնշել Թուրքիային, որպեսզի վերացնի Հայաստանի շրջափակումը**

ՎԱՃԻՆԳՈՆ, ՆՈՅԵՄԲԵՐԸ ՏԱՊԱՆ: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատը հաստատել է Թուրքիային առեւտրատնտեսական արտոնություններ տրամադրելու օրինագիծը: Մասնավորապես խոսքը ծեռագործ գորգերի եւ կարաքետների մասին է, բայց միաժամանակ չափանիկ է առնչվի տեքստիլ եւ կաշվե իրերին, ինչը անդուն էր Թուրքիան: Թիվ 5.385 օրինագիծը հաստատվել է նախապայմանով, որ ԱՄՆ կառավարությունը ճնշում գործադրի Անկարայի հանդեպ, որպեսզի վերջինս վերացնի Հայաստանի դեմ գործադրով բեռնարգելը:

ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռիչարդ Արմիթեջը Ներկայացուցիչների պալատի անդամ Ուիլյամ Թոնասին հղած ուղերձում նշել է, թե «ինքը ճնշում է գործադրում Թուրքիայի հանդեպ՝ վերջինս կողմից Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական եւ մշակութային շփումների վերականգնման ուղղությամբ»: Արմիթեջը Թուրքիայի կողմից Հայաստանի հանդեպ իրականացվող բեռնարգելքի տնտեսական հետեւանքներին կանորադառնա նաեւ 31 մարտ, 2003 թ. ամսաթվով կոնգրեսին ԱՄՆ արտաքին քաղաքականության վերաբերյալ ներկայացվելիք գեկուցագրում:

## Ուելսի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

ԱՐՄԵՆՊՐԵՍ: Յոկտեմբերի 30-ին, Ուելսի (Մեծ Բրիտանիայի) պատմաշխարհագրական շրջան) մայրաքաղաք Կարդիֆում քաղաքագետների եւ հոգեւորականների մասնակցությամբ տեղի է ունենալու հրապարակային հանդիսություն, որի ժամանակ հայտարարվելու է Ուելսի խորհրդարանի որոշումը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին: Այդ մասին տեղեկացնում է Սեծի տաճն Կիլկիտի կաթոլիկոսության մամլո դիվանը, նշելով, որ դրանում նշել է նաև եկեղեցականների ու քաղաքագետների այն խմբի հատուկ աշխատանքը, որ ծավալվել է Կարդիֆում:

Արամ Ա կաթոլիկոսը, ողջունելով կարդիֆցիների այդ քայլը, հայտարարել է, որ հոկտեմբերի 30Նը եւս կղանա պատմական ճշճարության վերահստատման եւ արդարության պահանջի օր: «Չէ որ անպատիծ մնացած ցեղասպանությունները արիթ ախտի տաճ նոր ցեղասպանությունների, շարունակվող անարդարությունների պատճառ պիտի դառնան, իսկ մարդկային իրավունքների եւ արժանապատվության ճանաչումը դեպի խաղաղություն եւ համերաշխություն առաջնորդող միակ ճամփան է», ընդգծել է Արամ կաթոլիկոսը:

«Ետեւաբար, Հայկական ցեղասպանության ճանաչումը ոչ միայն միջազգային օրենքի կարեւության եւ անժամանցելիության վերահստատումն է, այլ նաև մարտահրավեր թուրքիային՝ ճանաչելու համար հայ ժողովոյի դեմ կատարված ոճիրը», իր ուղերձում նշել է Արամ Ա-ը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

### ՀՈՎՐԱՆԵՍ ՔԱԶԱԽՍՈՒՆՈՒ ԿՅԱՆՔ ՈՒ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԱԲԱՆ

Հովհաննես Քաջազնունին (1868-1938) հայ ժողովորդի նորագույն պատմության հայոնի դեմքերից է: Անցնելով հասարակական-քաղաքական գործունեության բեղմնավոր ուղի, 1918թ. հունիսին հայոց Ազգային խորհրդի կողմից նա նշանակվում է Հայաստանի 1-ին հանրապետության 1-ին վարչապետ: Մեծ ջանքեր է գործադրում Հայկական հարցի արդարացի լուծման համար: Այդ նպատակով նա մասնակցում է նի շարք միջազգային հանդիպումների, սերտ կապեր է պահպանում հայ ազգային-ազգատագրական պայքարի ականավոր գործիչներ՝ Անդրանիկ Օգանյանի, Արամ Սահուկյանի, Նուրար Փաշայի, Հակոբ Բագրատունու, Սմբատ Բոռոյանի եւ ուրիշների հետ: Հայաստանում կարգեր հաստատելուց հետո նա հայրենանվեր գործունեություն է ծավալում մեր երկրում ճարտարապետության զարգացման բնագավառում, քաղաքաշինության ներ: Նրա գործունեությանը բարձր գնահատական են տվել Ալեքսանդր Մյանիկյանը, Սարգս Կայսյանը, Աղասի Խանջյանը, Արամայիս Երզնկյանը եւ այլ պետական գործիչներ:

Հ. Քաջազնումին ուներ ճարտարապետական փայլուն կրթություն: 1893թ. ավարտելով՝ Պետերբուրգի քաղաքացիական շինարարմերի հնատիտուտը եւ ստանալով՝ ճարտարապետի մասնագիտություն, երկար տարիներ աշխատել է Բարվում, Բարումիում, Թիֆլիսում: Նրա նախագծերով մի շարք շենքեր են կառուցվել Հայաստանի քաղաքներում: Ալեքսանդր Թանանյանի, Խիկողյանու Բունիաթյանի եւ ուրիշների հետ Քաջազնումին նորագույն ժամանակաշրջանի ճարտարապետներից է: Նրա մասին ուշագրավ տեղեկություններ են տվել հանրապետության շինարարմեր՝ Անոն Աղոյանը, Կարեն Դոլոխանյանը, ճարտարապետներ՝ Գեւորգ Մուշեղյանը, Վարագոյան Հարությունյանը եւ ուրիշներ, որոնք լսել են Քաջազնում ճարտարապետական արվեստի նվիրված դասախոսությունները:

Մեծ են Քաջազնում ծառայությունները Խորհրդային Հայաստանի 1920-30-ական թվականների ճարտարապետական մշակութային զարգացման գործում: Նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում, շինարարական հնատիտուտում, ստացել պրոֆեսորի կոչում, զբաղվել է գիտական բեղմնավոր գործունեությամբ: Քաջազնում գրչին են պատկանում մի շարք արժեքավոր հոդվածներ, հուշագրություններ, պատմվածքներ:

1937թ. Հ. Քաջազնումին անհիմն հալածանքների ենթարկվելով բանտարկվում է եւ վախճանվում բանտում: Հետմահու վերականգնվում է նրա բարի անունը:

Հովհաննես Քաջազնունու, որպես հասարակական-քաղաքական եւ կուսակցական գործիչ մասին շատ է գրվել: Ու սումնասիրված չէ նրա գործունեությունը որպես ճարտարապետի: Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող, ճարտարապետության թեկնածու Լոլա Կարենի Դոլոխանյանի սույն աշխատությունը հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունք է: Լոլա Դոլոխանյանը հեղինակն է ռուսերեն լեզվով 1980թ. լույս տեսած «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը 20-ական թվականներին», «Խիղողայոս Բունիաթյան», «Ռաֆայել Խորայելյան» եւ այլ աշխատությունների, որոնք բարձր գնահատականի են արժանացել մասնագետների կողմից: Ժողովրդական ճարտարապետ, ճարտարապետության ակադեմիկոս Զիմ Թորոսյանը, բնութագրելով Լ. Դոլոխանյանի բեղմնավոր գործունեությունը ճարտարապետական արվեստի պատմության եւ տեսության ուսումնասիրության բնագավառում գրել է. «Երկար տարիներ գիտեմ ճարտարապետ Լոլա Դոլոխանյանին դեռևս ուսանական տարիներից: Նա իր մասնագիտությունը սիրու, նրան նվիրված գիտական աշխատող է, բարձր են գնահատում նրա գործունեությունը, հետեւողական եւ տքնածան աշխատանքը գիտատեսական ճարտարապետության բնագավառում: Նրա գիտական հետաքրքրությունը սիրու, նրան նվիրված գիտական աշխատող է, բարձր են գնահատում նրա գործունեությունը, հետեւողական եւ տքնածան աշխատանքը գիտատեսական ճարտարապետության բնագավառում:

Լ. Դոլոխանյանը Հովհաննես Քաջազնումին ճարտարապետությունների ուսումնասիրությունը այդ արորելմի հետազոտման առաջին փորձն է եւ արժանի է խրախուսման:

Ակադեմիկոս Գեւորգ Ղարիբջանյան  
(Հար. 1)

## Պատմության դասերը դրվագներ

Պատմական գիտությունների թեկնածու Գեւորգ Յազդյանը, որ հայտնի է հայերենի, հայ ժողովորի պատմության նկատմամբ իր նախանձախնդիր գործունեությամբ, ընթերցողին է ներկայացրել մասնակինական հայություր հակահայկական քառանկյունու գործունեության վերաբերյալ պատմական 3 փաստաթրեր՝ գետեղված «Զգուշացեթք կեղծ բարեկամներից» խորագիր ներքո: Այդ երեք փաստաթրերն է այսօր շատ ուսանելի են. պահեստինցի արար պատմաբան Մարվան Բուհերիի «Թեղողը Յերցը եւ Հայկական հարցը» գիտական ուսումնասիրությունը, «Երիտրութերը, հրեաները, մասնաները եւ Հայկական կոտորածը» պայմանական վերնագրով՝ Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանի նամակը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Դ. Լուքըրից Զ. Զարդինգին եւ բրիտանացի հայտնի հետախույզ Արաբիայի Լոլութենսի հետ մի հարցագրույց «Հայերն անտանելի են» վերնագրով (բարգանանությունը՝ Կարախյան Սուրենյանի, տպվել է «Ազգ» կուլ):

Յազդյանի ընտրած, խմբագրած եւ ծանոթագրած այս երեք հրապարակումներն էլ նույն բնույթն ու հստակ ուղղվածություն ունեն, որ բացահայտում են արեւնոյան տերությունների, մասնաների, սինականների, հրեաների հայկական հարցի նկատմամբ ունեցած դիրքորոշումները, այն է Հայկական հարցն օգտագործել, շահարկել եւ վերջապես գրաբերել հանուն սեփական շահերի:

Յետք լրագրող Թեղողը Յերցը, որ 35 տարեկանից լրագրությունից թոշչը է կատարել քաղաքականության թոշչը և դիվանագիտության թոշչը եւ դիվանագիտության բնագավակը 1895 թ. հայտարարելով, որ ինքը հրեական Պարնելն է (իշլանդացի քաղաքական առաջադեմ գործիչ), հրեաների ժամանակակից պատմության բնկումնային տարիներին կարողանում է ընկել Եվոպական հշխանությունների կենտրոն վինտելու ուղիներ, հաստատելու հարաբերություններ, որ կարող էին ստեղծել պայմաններ հրեական պետության հիմնադրման համար: 1896 թ., երբ Վիեննայում լույս է տեսնում Յերցի «Հովհական պետություն» գիրքը, իրադարձությունները սկսում են ավելի արագ զարգանալ: Լեհ քաղաքական արկածախնդիր Նելիկոնու, ուսու հրեա լրագրող Կյազկոնի հետ կապելու օգտագործվում են նպատակային ծեւերով: Զանազան գաղտնի տեսակցությունների եւ բանակցությունների արյունքում ծեւավորվում է մի նախագծ, որը, սակայն, մերժում է Արդուլ Համիդը:

Մեր ազգի դեմ նյութած դավերին մենք միշտ անտեղյակ ենք կամ թվում ենք այդպիսին: Անավասիկ մի քանի մեջքերումներ. «Հայերը պետք չէ ինանան, որ մեր մասնակցությունը արյունքում ծեւավորվում է մեր ազգային շահերով» կամ «Գործերի ներկա դրության դեպքում առկա է այն հավանականությունը, որ հաջորդ երեսուն կամ քառասուն հազար հայերի գոհաբերության արյունքում հրեաներին մի քիչ հող կշնորհվի Սիրիայում բնակավայրեր ստեղծելու համար»:

«20 նկ ֆունտ, որից 2 մլնը կիատկացվի որպես անհապաղ կանխավճար Պաղեստինի գիշման համար, իսկ 18 միլիոնը (պարտքային) ստուգող հանձնառողությունը թուրքական կառավարության ազատագրման համար»:

Արդուլ Համիդի մերժման պատճառը սուլթանի դգրիությունն էր վիեննական մի թերթից, որին մի ժամանակ աջակցում էր Յերցը: Վերջինս հասկանում է, թե ինչ ծառայություններ են ակնկալվում իրենցից. «Ես պետք եւ վերոպական մանուկի վրա ազդեցություն գործեմ (Լոնդոնում, Փարիզում, Բեռլինում,

# Հորիս Ռեկրուտարեր

Վիեննայում), որպեսզի Հայկական հարցը լրւաբանվի թուրքերի համար առավել բարյացական ոգով: Երկրորդ պետք է ուղղակի համոզեմ հայ առաջնորդներին՝ Ենթարկվել իրեն, որից հետո նա կան բոլոր հնարավոր գիշումները»:

Դերզը 1896 թ. 3 լարված ամիսներ է վատնում Եվրոպայի հայ հեղափոխական կոմիտեների մեջ ճեղվածք առաջացնելու համար: Նա սեփական շահերին հասնելու համար Հայկական հարցը դարձնում է ճենածության առարկա:

Երկրորդ փաստաթությունը, որ առաջին անգամ հրատարակել է լոնդոնաբնակ արար պատմաբան Ելի Կելուրիեն, Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանի գաղտնի նամակն է (մտերմաբար, 1910 թ.) ուղղված իր երկրի արտգործնախարարին, որտեղ պարզորոշ ուրվագծում է այն կազմը, որ եղել է երիտրուրքերի, հրեաների, մատնների եւ հայկական կոտորածը ծրագրելու եւ իրազրծելու միջեւ (մատննական կոմիտեի ցանցը տարածված էր ողջ կայսրությունով մեկ): ՆԳ նախարար Թալեար փաշան եւ ֆինանսների նախարար Զավիդը կոմիտեի գաղտնի ուժերի պաշտոնական ներկայացուցիչներն էին: Թալեարի ՆԳ նախարար դաշնալուց մոտ մեկ տարի առաջ, ասվում է այս նամակում, պատասխանառու պաշտոնների նշանակվեցին միայն մատններ կամ կոմիտեի հետ կապված, կամ էլ այս 2 որակները համատեղող մարդիկ:

Արարիայի Լոռւրենսի հետ հարցազրույցում (1919 թ.) բացահայտ խոսվում է հայերին (իրեն իրն ժողովորի, մանրանասնորեն հատկանիշներն ուսումնասիրելուց հետո) կոտորելով վերացնելու, իսկ Հայաստանի հարստությունները շահագործելու ծրագրերի մասին: Պատմական այս երեք փաստարդերը կարեւոր են նաեւ արդիական լինելու իմաստով: Ի վերջո, ինչո՞ւ է զգնության կոչ անում հրատարակիչը: Պատմության ուսումնասիրությունը բնակ ինքնանպատակ չէ, պատմությունը, անցյալից հաստ առնելու համար է, այլապես կույր ճամփորդների ենք մանավում:

Այսպես ուրեմն, պետք չէ թուրքերի կեղծ քաղաքակրությամբ խարվել, ինչպես անցած դարասկզբին, ծառայել մատննական, սինդիստական կազմակերպություններին, որովհետև «միջազգային հրեականությունը, սինդիզմը եւ նրանց ծառայող մատնությունը հիմնական դերակատարությունն են ունեցել Հայոց ցեղասպանության ծրագրնան եւ հրականացման մեջ»:

Այս զգնության կոչն ուղղված է ինչպես առողջ դատողությունը չկորցրածներին, այնպես էլ սոցիալական բնիքին կամ քաղաքական թրախախիլ մեր երբաշվածներին: Իրեւ շարունակվող վստանքի իրենին ապացույց հրատարակիչը մատննաշում է այսօրվա Հայաստանը՝ իր արտագաղթով, որը հայության քողարկված կոտորածն է, հայության հետ որեւէ առնչություն չունեցող, օտարածին հոգեւորևմշակլութային տարրերի տարածումն ու բազմացումը, որ մարդասիրության քողի տակ քարված քաղցկեղի պես տարածվում են մեր երկրի առանց այն էլ թուլացող մարմնում: Սրա դեմ պայքարը պարզապես չգայթակղվելն է, չխարվելը, եւ ներքին հնարավոր հնարիություղականությունը:

## Բորիս Ելցին. «Ես սիրում եմ Հայաստանը»

Համայն Ուուսին առաջին նախագահը Թուրքիային հորդորում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը

### ԹԱՌՈՒՆ ՀԱԿՈՐՁՄԱՆ ԱԾԳ

Գահակալության ութ տարիներին Բորիս Ելցինը ժամանակ չգտավ այցելելու Հայաստան: Վերջին անգամ պրո Ելցինը Երեւանում էր 1991 թ.

ԼՈՒՅԱ # 61-64, Խոյենքեր, 2003թ. էջ 9


սեպտեմբերի 22-ին ՈՍՖՍՀ գերագույն խորհրդի նախագահ եղած ժամանակ՝ ընդամենը մի քանի ժամ: Սեպտեմբերի 21-ին նույսուլքան նազարբանի հետ նա բաքվից եկավ Գյանջա, ապա՝ օդանավով խոչալու, սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտում ժողովուրդը բարձրում էր. «Ելցին, Ելցին, Ելցին»: «Ես ու նազարբանը վերցրել ենք այս դերը, որպեսզի այլևս արյուն չհեղիղի: Արդեն չորս տարի մենք տեսնում ենք, որ կենտրոնը, այդ թվում նաև Գորբաչովը, ոչինչ չի անում: Սխալը գործվեց հենց սկզբից՝ 1988 թվից, իսկ հետո ուժի միջոցով ազգամշյան խմիլիները լուծելու փորձերը դրական արյունինք չհասցրին: Միայն խաղաղ բանակցությունների ճանապարհով, բանավեճի, փոխգոման միջոցով կարելի է հասնել պատերազմի ավարտին: Այս վերքը (Ղարաբաղի) մեր ամբողջ երկրի վերը է», Ստեփանակերտում ժողովորդին ասում էր Բորիս Ելցինը:

«Ինձ հետ էր բանակցում», շաբաթ օրը «Արմենիա» օդակայանում հիշեց Ռոբերտ Քոչարյանը:

1991 թ. սեպտեմբերի 22-ին Ելցինը ու նազարբանը Երեւանից ուղևորվեցին Տելեզնովոդովսկ: Սեպտեմբերի 23-ի լուս 24-ի գիշերը Աղրեջանի նախագահ Այզա Մուրալիքովը, Հայաստանի Գև նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ ԼՂ պատվիրակությունը, որին մաս էր կազմում նաև Ռ. Քոչարյանը, Ելցինի եւ նազարբանի միջնորդությամբ 13,5 ժամ տեսած բանակցություններից հետո ստորագրեցին 10 կետանոց համատեղ կոմյունիկետ. մինչ շարունակվում էին ժեղանովողակյան բանակցությունները, Աղցախում արյուն էր հեղվում: Դիտորդները պնդում էին, որ այդ օրերին Ելցինին հետաքրքրում էր ոչ այնքան Ղարաբաղի հարցը, որքան հոգեվարը ապրող ԽՍՀՄ ժողովրդին Գորբաչովի անկարողությունը մեկ անգամ եւս ցույց տալը:

Օդակայանում Բորիս Ելցինին եւ տիկնոջ՝ Նախնա Իոսիֆովնային անձանմ դիմավորեց նախագահ Քոչարյանը՝ տիկնոջ հետ: Ուստաստանի առաջին նախագահի վեցօրյա այցը հայաստանցիներին շատ զարմացրեց: Զարմանալու ոչինչ չկա, ամեն ինչ շատ պարզ է. օգոստոսի 31-ին պրո Ելցինը հեռախոսով շնորհակղում է Ռոբերտ Քոչարյանի ծննդյան տարեդարձը, իհշեցնում, որ Հայաստանը շատ է սիրում, Քոչարյանն էլ ՈՂ նախկին նախագահին հրավիրում Հայաստան:

Օդակայանում պրո Ելցինը լրագրողներին ասաց, որ ինքը պիրում է Հայաստանը, բնությունը, մարդկանց, իհշեցրեց, որ Ուստաստանում 2,5 մլն հայ է բնակչում, իսկ ԱՄՆ ու ընդամենը 1 մլն: «Կզրուցեն Հայաստանի նախագահի հետ, ինչն ինձ համար



օգտակար է եւ հաճելի», ասաց Ելցինը: Ուստաստանի առաջին նախագահը ուներ առույգ տեսք:

Ելցինների ոչ պաշտոնական այցելության վեցօրյա ծրագիրը հագեցած է. հանգիստ Սեպտեմբեր, այցելություններ Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ: Սպասվում է ՈՂ առաջին նախագահի համիլապուր Հայաստանի առաջին նախագահի հետ:

Գաղտնիք չէ Բորիս Նիկոլաեվիչի համակրանքը Լեռն Յակոբիչի հանդեպ:

